ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ

7 հարցերի կարճ պատասխաններ

1 Ո՞վ կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

Կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային **կարգապահությունը խախտած աշխատողը:**



2 Ո՞րն է համարվում աշխատանքային կարգապահության խախտում:

Աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով **աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը** կամ աշխատանքային օրենսդրությամբ, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված **վարքագծի կանոնները որևէ այլ կերպ խախտելը:**

3 Ինչպիսի՞ կարգապահական տույժեր կարող են կիրառվել:

Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող է կիրառվել **նկատողություն, խիստ նկատողություն** կամ օրենսգրքով նախատեսված հիմքերով աշխատանքային **պայմանագրի լուծում:** Առանձին կատեգորիայի աշխատողների համար օրենքով կարող են սահմանվել նաև կարգապահական այլ տույժեր:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ օրենքով չնախատեսված կարգապահական տույժերի կիրառումն **արգելվում է:** Աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել **մեկ** կարգապահական տույժ:

4 Ո՞րն է կարգապահական տույժի կիրառման կարգը:

Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին **գրավոր բացատրություն՝** տրամադրելով ողջամիտ ժամկետ: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության:

5 Ի՞նչ ժամկետներ պետք է պահպանվեն:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ **մեկ ամսվա ընթացքում:** Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է **վեց ամիս:** Իսկ եթե խախտումը հայտնաբերվում է աուդիտի, ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է **ոչ ավելի, քան մեկ տարի:**

6 Ո՞ր դեպքում է մարվում կամ հանվում կարգապահական տույժը:

Կարգապահական տույժը համարվում է մարված, եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո **մեկ տարվա ընթացքում** աշխատողը **չի ենթարկվել** նոր կարգապահական տույժի:
Կարգապահական տույժը կարող է **հանվել մինչև մեկ տարին լրանալը,** եթե աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:

7 Ո՞րն է աշխատողի պաշտպանության միջոցը կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում:

Կարգապահական տույժը կարող է **բողոքարկվել դատական կարգով** տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց, այսինքն՝ դրա մասին աշխատողին պատշաճ ծանուցելուց հետո **մեկ ամսվա** ընթացքում: